Պատասխաններ (գնահատման քայլը՝ 0,25)

11-12-րդ դասարաններ

1. 1) սխալ է
   2) ճիշտ է
   3) ճիշտ է
   4) սխալ է
   5) սխալ է
   6) ճիշտ է:

2. 1) ճիշտ է
   2) սխալ է
   3) սխալ է
   4) սխալ է
   5) ճիշտ է
   6) սխալ է:

3. ա) բնական պայմաններն աշխարհագրական միջավայրի այն տարրերի ամբողջությունն են, որոնք որոշակի ազդեցություն են թողնում հասարակության կյանքի տարբեր կողմերի, մասնավորապես տնտեսության վրա: Օրինակ, բարձր լեռնային ռելիեֆը, հողի բազմամյա սառցույթը, ձնահյուսը, սառցադաշտը, երկարաշունչ ձմեռները, տոթ ու շոգ ամառները և այլն:
   բ) Կենդանի ու անկենդան բնության օբյեկտների և համակարգերի ամբողջությունը, բնական միջավայրի բաղադրատարրերը, որոնք օգտագործվում են հասարակական արտադրության պրոցեսում՝ մարդու նյութական և մշակութային պահանջների բավարարման համար, կոչվում են բնական ռեսուրսներ: Օրինակ, հանքային, հողային, ջրային, անտառային, էներգետիկ, համաշխարհային օվկիանոսի, կլիմայական և այլ ռեսուրսներ:

4. ա) Ավստրալիային – մնացորդային (ռելիկտային) - էյր, Թորենսի:
   բ) Սկանդինավիային – սառցադաշտային (մորենային) – Սայմա, Ինարի:
   գ) հրաբխային շրջաններին – հրաբխային (խառնարանային) - Արմաղանի, Կրոնոցկոյե:
   դ) Արևելաաֆրիկական մեծ բեկվածքին – տեկտոնական – Տանգանիկա, Նյասա:

5. 3), 1), 2), 4):

6. 1), 3), 7), 8):

7. 1. 1:500.000 մասշտաբի քարտեզում 1սմ-ին համապատասխանում է 5 կմ, իսկ 1սմ^2-ուն՝ 5 x 5 = 25կմ^2, 370.000կմ^2 : 25կմ^2/սմ^2 = 14800սմ^2

   Պատ.՝ 14800սմ^2

   2. 1:2 000.000 մասշտաբի քարտեզում 1սմ-ին համապատասխանում է 20 կմ, իսկ 1սմ^2-ուն՝ 20 x 20 = 400կմ^2 100.000կմ^2 : 400կմ^2/սմ^2 = 250սմ^2

8. 1կգ պայմ. վառելիքի այրումից ստացվում 2կվտ/ժ էներգիա
   ա) 2 տ նավթը = 2000 կգ x 1,5 = 3000 կգ x 2կվտ/ժ = 6000կվտ/ժ
   բ) 5 տ գորշ ածուխը = 5000 կգ x 0,5 = 2500 կգ x 2կվտ/ժամ = 5000կվտ/ժամ

   Պատ.՝ 6000կվտ/ժ և 5000 կվտ/ժ

9. Լոս-Անջելես, Պերտ, Պալերմո, Քեյփթաուն:

10. Բոսնիա և Հերցեգովինա, Տաջիկստան, Պակիստան, Բանգլադեշ:

11. 3)

12. 4)

13. 1 - բ 2 - դ 3 - ա 4 - գ

14. 4) 1 - գ, 2 - դ, 3 - բ, 4 - ա

15. 1) Կարմիր ծովի ջրի մեծ աղիությունը պայմանավորված է մեծ գոլորշացումով, գետերի քաղցրահամ ջրի աննշան մուտքով, տեղումների շատ քիչ քանակությամբ, համաշխարհային օվկիանոսի հետ թույլ կապով:

2) Ըստ բարձրության ՀՀ ամենամարդաշատ գոտին մինչև 1000 մ բացարձակ բարձրություններն են, որոնք զբաղեցնում են ՀՀ տարածքի 10%-ը և ապրում է բնակչության 54%-ը: Միջին խտությունը 650 մարդ/կմ^2 է: Պատճառը տարածքի մեծ յուրացվածությունն է, բնակեցման պատմական գործոնը, աշխատատար գյուղատնտեսությունը, հարթ ռելիեֆը, նպաստավոր կլիմայական պայմանները, մայրաքաղաքային տարածաշրջան լինելը և այլն: